# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

## ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ ԷՕՐՆԵԿՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը «Ջինիշյան» հիմնադրամի համագործակցությամբ օրեր առաջ կազմակերպել էր 7-օրյա ամառային հանգիստ «Էօրնեկյան հանրակրթական դպրոց» հանրակրթական ուսումնական հաստատության 8-15 տարեկան յոթանասուն աշակերտների համար, որոնք կարիքավոր, բազմազավակ եւ սոցիալական տարբեր ծրագրերում ընդգրկված ընտանիքներից են:

Առաջնորդությամբ դպրոցի մանկավարժ-ջոկատավարների Հանքավանի «Զեփյուռ» ճամբարում երեխաները հետեւեցին մի շարք կրթական եւ հոգեւոր դաստիարակության ծրագրերի:

Ճամբարական յոթ օրերի ընթացքում տեղ ի ունեցան նաեւ արշավներ, ուխտագնացություններ, պարաբեմույթ ուսուցողական խաղեր եւ մրցույթներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 15-ին՝ Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: Ս. Պատարագի ընթացքում Սրբազան Հայրն անդրադարձավ տոնի խորհրդին եւ Աստվածամոր կերպարին:

Հավարտ Ս. Պատարագի Մայր Տաճարից եկեղեցականաց թափորն ուղղվեց դեպի Ս. Տրդատի Բաց խորան, ուր հանդիսապետությամբ Պատարագիչ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի՝ կատարվեց Խաղողօրհնեքի արարողությունը: Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի աղոթքի ընթերցումից եւ հոգեւմայլ շարականների երգեցողությունից հետո հանդիսապետ Սրբազան Հայրն օրհնեց խաղողն ու պարզվա ողջ բերքը:

Վերջում միաբան սարկավագները օրհնված խաղողի ողկույզները բաժանեցին ժողովրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ-ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Օգոստոսի 18-20-ը Կիպրոսի Լառնակա քաղաքում «Վորլդ վիժըն» միջազգային բարեգործական կազմակերպության հովանավորությամբ տեղի ունեցավ «Պատանիների

ապրվածաշնչային դասընթաց»-ի ծրագրի պարեկան վերապատրաստում-կոնֆերանսը: Կոնֆերանսը կազմակերպվել էր Հայաստանի կիրակնօրյա դպրոցներում գործող ուսումնական ծրագրերի եւ դասագրքերի շրջանակներում:

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ներեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Պարույր քահանա Ավետիսյանը: Ժողովին ներկա էր նաեւ «Վորլդ վիժըն» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Եկեղեցու եւ պետության հետ հարաբերությունների բաժնի պատասխանատու Կարինե Հարությունյանը:

Կոնֆերանսի ընթացքում լսվեցին երեխաների քրիստոնեական դաստիարակության, ինչպես նաեւ դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ ելույթներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ԲԱՆՏԱՅԻՆ ԿԱՊԵԼԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ՝ ՍՏՈԿՀՈԼՄՈՒՄ

Օգոստոսի 20-25-ը Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում տեղի ունեցավ Բանտային կապելանների միջազգային ասոցիացիայի (IPCA) 6-րդ միջազգային ժողովը՝ «Մոռացված մարդիկ» խորագրով: Ժողովին մասնակցում էին 320 կապելաններ աշխարհի բոլոր անկյուններից: Այն կազմակերպվել էր IPCA-ի եւ Շվեդիայի կառավարության կողմից: Ժողովի ընթացքում քննարկվեցին բանտարկյալների հոգեւոր դաստիարակության, սոցիալ-տնտեսական եւ կրթական հիմնախնդիրները:

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ տնօրինությամբ ժողովին Հայ Առաքելական եկեղեցին ներկայացրեցին Տ. Կարապետ ավագ քհն. Գըլըճյանը եւ Տ. Շավարշ քհն. Սիմոնյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 29-ին՝ Սուրբ Աստվածածնի զատու գյուտի տոնին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Պատարագիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի ձեռամբ քահանայական օծում ստացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի չորս միաբան սարկավագներ:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ տեղի ունեցավ սարկավագների ըն-



Խաղողօրհնեք



Քահանայական ձեռնադրություն



Կրթության մշակների օրհնության օր

ծայման արարողությունը: Սուրբ Պատարագին, շարականների երգեցողության ներքո եւ աղոթքների ընթերցմամբ Հովակիմ Սրբազանը քահանայության կոչեց նորընծաներին, Ս. Մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը՝ շնորհելով հոգեւոր նոր անուններ: Մանուկ սարկավագ Մալխասյանը վերակոչվեց Տ. Աբրահամ քահանա, Սեւակ սարկավագ Գրիգորյանը՝ Տ. Ահարոն քահանա, Եսայի սարկավագ Կարապետյանը՝ Տ. Գեղարդ քահանա, Արթուր սարկավագ Գեւորգյանը՝ Տ. Սիփան քահանա: Ձեռնադրության եւ օծման արարողության ավարտին քահանա հայրերը ներկաներին տվեցին իրենց անդրանիկ օրհնությունը:

Այնուհետեւ ձեռնադրող Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Հայ Առաքելական Եկեղեցու կյանքում կարեւոր եւ ուրախալի այս իրադարձությանը, որով չորս նոր եկեղեցականներ հոգեւոր ծառայության կոչվեցին: Իր ոգեշունչ քարոզում Հովակիմ Սրբազանն ասաց. «Սուրբ Մարիամ Աստվածածնի գոտու գյուտի տոնին այս խորանը պտղաբերեց, եւ ծնվեցին չորս նոր քահանաներ, քահանաներ, որոնց Սուրբ Իգնատիոս Անտիոքացին նմանեցնում է առաքյալներին, ովքեր պետք է մտնեն ժողովրդի մեջ եւ քարոզեն Տիրոջ Ավետարանը»: Խոսքն ուղղելով նորընծա քահանաներին՝ նա հորդորեց աներեր հավատքով, նվիրվածությամբ եւ նախանձախնդրությամբ ծառայել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ու հայ ժողովրդին, պատասխանատվության գիտակցումով մոտենալ իրենց սուրբ կոչմանը եւ իրենց վստահված հայորդիներին առաջնորդել ճշմարտության եւ հավիտենության ուղիով:

Այս բերկրալի առիթով Սրբազան Հայրը շնորհավորեց նաեւ Ամենայն Հայոց Հայրապետին՝ կատարված ձեռնադրությունը փեսանելի արտահայտությունը նկատելով Հայոց Եկեղեցու վերազարթոնքի:

Այնուհետեւ Նորին Սրբության առաջնորդությամբ Մայր Աթոռի միաբանները բարձրացան Ս. Խորան՝ շնորհավորելու եւ համբուրելու քահանաների մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը:

Նույն օրը երեկոյան կատարվեց նաեւ վեղարի տվչության արարողությունը: Տ. Սիփան քահանան վեղար ստացավ՝ համալրելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերը:

Քառասնօրյա աղոթական շրջանից հետո նորընծաները ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր կառույցներում եւ թեմերում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԿԱՏԱՐԵՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Օգոստոսի 31-ին՝ Գիտելիքի օրվա նախօրեին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության կարգ, որով սկիզբ դրվեց մի նոր՝ կրթական ոլորտի երախտավորների օրհնության ավանդության:

Զանգերի հանդիսավոր ղողանջների ներքո եկեղեցականների թափորը Ամենայն Հա-

յոց Հայրապետին՝ ուղեկցությամբ ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի, առաջնորդեց Մայր Տաճար, ուր կատարվեց շուրջ երկու հարյուր մանկավարժների օրհնության կարգ:

Արարողությանը նաեւ ներկա էին ներկայացուցիչներ ԱԺ կրթության մշտական հանձնախմբից, ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության աշխատակիցները, ՀՀ մարզպետարանների կրթության վարչությունների պետերը, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորները, ՀՀ քոլեջների եւ ուսումնարանների տնօրենները, Երեւանի եւ մարզերի դպրոցների ու մանկապարտեզների ներկայացուցիչներ, Մայր Աթոռի կրթական հաստատությունների՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Սեւանի Վազգենյան դպրանոցի, «Էօրնեկյան» հանրակրթական դպրոցի տեսչության անդամները:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական իր պատգամն ուղղեց ներկաներին. «Սրտի անհուն բերկրանքով ողջունում ենք ձեզ այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ համայն հայության նվիրական այս սրբավայրում, որտեղ սկիզբ է առել հայ դպրությունն ու գիտության դարբնոցը: Հայրապետիս համար մեծ ուրախություն է այսօր կրթության մշակներիդ հանդիպելու եւ հայցելու Աստծո առատ օրհնությունը՝ ի բարօրություն հայրենի դպրոցի ու կրթական անդաստանի: Դուք ուսումնական տարվա սեմին Աստծո եւ Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Ձեր ուխտն եք նորոգում այսօր՝ անսպառ եռանդով, աննահանջ սիրով ու անմնացորդ նվիրումով ջամբելու մեր մանկանց իմացությունն ու լույսը հայրենի ավանդների ու հոգեւոր արժեքների:

Այսօր կյանքի արագընթաց զարգացումներում, առավել քան երբեւէ, կարեւոր են ուսումն ու գիտելիքը, բայց պետք է հիշել, որ միշտ, բոլոր ժամանակներում կարեւոր է հոգին կրթելը, ճշմարտության եւ բարու մեջ հաստատելը: Արարող ուժ է գիտելիքը, ստեղծագործ զորություն եւ բարիք, երբ ամուր կերպով հաստատված է հավատքի վեմին եւ հոգեւոր արժեքների հիմերի վրա: Ահա այսպիսի ճանաչողությունն է, այսպիսի կրթական դարբնոցը, որ Ավետարանի խոսքի համաձայն, դիմակայում է ժամանակի հողմերի եւ հորձանքների առջեւ: Հոգեւոր արժեքների զորությամբ դարերի փորձությանց բովով ու հրով անցնելով՝ ձույլ ոսկի է դարձել հայ դպրոցը, մաքուր ու անաղարտ, ինչպես նրա մեջ կրթվող հայ մանկանց միտքն ու հոգին, որոնց կոչված եք դուք առաջնորդելու: Սիրելիներ, կոչված եք առ Աստված հավատքով սնելու մեր մատաղ սերնդին, սովորեցնելու ճանաչել ու սիրել մեր Հայրենիքն ու Եկեղեցին, հոգալ մարդկանց մասին, ստեղծել ու կերտել, մտածել ուղիղն ու արդարը. այս պետք է լինի կրթության ուղեծիրը, սրանով է լուսավոր եւ առաջատար դարձել ու դառնում ցանկացած ուսում եւ գիտություն: Հոգեւոր լույսով սուրբ ու նվիրական է հայ կրթական դարբնոցը եւ միջնադարյան մեր վանական դպրոցների ավանդության համաձայն՝ այսօր էլ նրանից վեր պիտի փայլի պատվիրանը. «Լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղին յորում կաս դու ի դմա՝երկիր սուրբ է» (Ելից Գ 5): Այն ամենը, որ կարող է խաթարել դպրոցի ազնիվ նկարագիրը, պետք է, ուրեմն, թողնել նրա շեմից դուրս եւ ազնիվ մտքով ու հոգով մտնել այնտեղ՝լծվելու մանկավարժի երախտավոր գործին:

Սիրելի մանկավարժներ եւ կրթական ոլորտի երախտավորներ, այս նվիրական օրը թող լինի մի նոր առիթ ձեր առաքելության մեջ Աստծո առաջնորդությունն ու շնորհները խնդրելու: Վերարժեւորեք ձեր ազնիվ ու պատվական կոչումը, որն իր նվիրական պարունա-

կով ու ավանդությամբ մոտեցնում է ձեզ մեր Սուրբ Թարգմանիչների փաղանգին՝ պարտավորեցնելով ամեն ուսուցչի մեր զավակների միտքը վարժեցնելու ուղիղը խորհելու, սիրտը՝ բարին զգալու և կամքը՝ բարին կամենալու փերուսապատվեր առաքելությունը:

Հայրապետիս սրտաբուխ մաղթանքն է, որ Ամենակալ Տերն ամենքիդ պարգևի անվրդով կյանքի երկար տարիներ և բեղմնավոր գործունեություն: Այս առիթով Աստծո ամենառատ օրհնությունն ենք հայցում նաև մեր հայրենի պետության կրթական գերատեսչության և աշխատակիցներին, ի դեմս ՀՀ կրթության և գիտության Նախարար Տիար Արմեն Աշոտյանի և այստեղ ներկա բոլոր կրթական հաստատությանց սպասավորների, ում ջանքերով են այսօր շարունակում զարգանալ և առաջընթաց ապրել հայ դպրոցն ու կրթությունը: Թող Ամենակալ Տերն Իր ամենիմաստ Խոսքով ու Սուրբ Հոգու շնորհներով ամենայն ժամ պայծառ պահի հայոց նվիրական դպրոցի անմար կանթեղը:

Բարի ընթացք ու ձեռքբերումներ ենք մաղթում նոր ուսումնական տարում»:

Վերջում Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Նորին Սրբությունը վերստին իր օրհնությունն ու մաղթանքները հղեց մանկավարժներին և կրթության ոլորտի սպասավորներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ